

## Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Հայ համարարքառային գրականության հետազոտությանը նվիրված մատենագրական և պատմա-քննական սույն ակնարկը, ինչպես տեսանք, անըլլաժեշտարար ընդգրկեց նաև մի շարք հարակից հարցեր, որոնք պատկանում են և՛ ընդհանուր բանափրությանը և՛ հայագիտությանը:

Ընդհանուր բանափրությանը հետաքրքրող հարցերից պիտի հատկապես ներառի ունենալ Տատիանու Ստրու, Ամոն Աղեքասնդրացու և Եվսերիոս Կեսարացու համարարքառերի մեթոդական աշերսի հարցը, կապված՝ Ավետարանների բնագրային կանոնականության և ամբողջականության պահպանման հարցերի հետ:

Բնագրային համեմատությունների ուղղության վրա Տատիան-Ամոն գծի հատկանշական երևույթն էր՝ բնագրերի կանոնականության խախտումը: Տատիանոսի մոտ այդ խախտումը հանդես էր եկեղեց բնագրերի միաձումամբ, իսկ Ամոնի մոտ՝ բնագրերի մասերի տեղափոխումներով. բայց բնագրերի ամբողջականության հարցում նրանք հետացել էին իրարից, որովհետև մինչ առաջնը, բնագրերն ի մի ձուկերով, կրճատումներ էր կատարել, երկրորդը բնագրերի միայն շարադրական ընթացքն էր խախտել՝ առանց կրճատումների: Այս վերջին իրողությունից հետո, որ մենք հանգամանորեն լուսարանեցինք, առաջացել էր Ամոն-Եվսերիոս գիծը, որի հատկանիշը բնագրերի ամբողջականության պահպանման էր: Այստեղ էական է այն, որ, ըստ մեր եզրակացությունների, Ամոնի համարարքանի բնագրային ընդգրկումները լինելով անթերի, Եվսերիոսի համարարքանի հետ նրա ունեցած առնչությունն ամբողջական էր և ոչ մասնակի, ուստի և՛ Եվսերյան համարարքառը պարզապես և ամբողջապես ամոնյան համարարքանի շրջումն էր՝ «ըստ այլում գումարութեամ»: Դա միայն կառուցվածքի փոփոխություն էր, որի շնորհիվ վերանում էին ամոնյան համարարքառում եղած՝ բնագրային կանոնականության խախտումները:

Լուսանցային կանոնների ծագման հարցում ընդհանուր բանափրության համար կարևոր երևույթ են պարզում հայկական ձեռագրական տվյալները՝ Ավետարանների հնագույն թարգմանության հետ միասին այդ կանոնների ծագումը ցոյց տալով ասորական աշխարհից:

Ի հարկե՝ լուսանցային կանոնների ուսումնափրության արդյունքներն ավելի նշանակալից են հայագիտության համար: Մի կողմից այն փաստը, թե լուսանցային կանոնների առկայությունն ընդհանուր երևույթ է հակերեն Ավետարամի հնագույն ձեռագրերում, ինչպես և ասորական Պեշիտույի Ավետարանի ձեռագրերում, իսկ մյուս կողմից պատմական և բանափրական տվյալներով հայտնի այն իրողությունը, թե ասորերենից էր կատարվել հայերեն Ավետարանների սկզբանական թարգմանությունը, անառարկելի են

դարձնում այն եզրակացությունը, թե լուսանցային կանոններն ասորականից են անցել մեզ՝ այդ թարգմանության հետ միասին, իսկ հետագայում, երբ այդ թարգմանությունը վերանայվել է հունական թևագրերի հիման վրա, միաժամանակ լուսանցային կանոնները ևս վերախմբագրվել են ու հարմարեցվել հունական ելքերյան կանոնների տարազին: Հանգամանքների երկողմանի համապատասխանությունը թույլ կտա նաև ասել, որ ձեռագրերում լուսանցային կանոնների պարզած երևույթն իր հերթին ամրապնդում է հայերեն և վետարանների սկզբանակն ասորերենից թարգմանված լինելու պարագան:

Հայագիտության համար հարակից հարցերից է և այն, որ չորս Ավետարանների նախադրություններն ու գլխակարգությունները, և Վերջիններին կցված համարարառային կանոնները, Գեորգ Ակնուցու հեղինակությունն են, հակառակ անցյալում նշան այն կարծիքին, թե նրա գրչին են պատկանում միայն Հին Կոտակարանի նախադրություններն ու գլխակարգությունները: Ավետարանների այդ նախադրություններն ու գլխակարգություններն առաջին անգամ 1270 թվականին են երևան եկել, բայց Փ դարից էլ առաջ գոյրքուն է ունեցել նոյն գլխակարգությունների մի նախատիպը:

Եթե մի կողմ էլ թողնենք հարակից հարցերը, պիտի նկատի ունենալ, որ նպական համարարառաների ուսումնափրությունն արդեն ինքնին մի ամրող շարք է մատենագրական ու բանափրական կարևոր հարցերի: Եվ մենք արդեն իր ընդհանուրության մեջ ուրվագծեցինք այդպիսինների պատկերը, ինչպես, օրինակ, դեռ վաղուց արծարծված այն հարցի, թե Տատիանոսի Համարարառը Ե դարում պիտի թարգմանված լիներ հայերենի, կամ թե՝ Նվազերիսի համարարառային կանոնները հմանապես պիտի լինեին Ե դարում թարգմանված, ինչպես այժմ էլ Ավետարանի հմագույն ձեռագրերի թեմությունը մեզ համոզում է, որ դրանք, Աստվածաշնչի երկորրդ թարգմանության ժամանակվանից, դարերով ուղեկցել են հայկական Ավետարանին, լուսանցային կանոնների հետ միասին: Այսպես և այլ հարցեր:

Ուշագրավ է այն երևույթը, որ համարարառային գրականությունը հայերի մոտ սկզբնական շրջանում, երբ հետազոտության համարարառային մեթոդը համեմատության առադրական եղանակով էր ընթանում, մնացել էր թարգմանական շրջանակների մեջ: Միակ նորությունը, որ հայը կարողացել էր մոծել այս գործի մեջ, այդ եղանակի շրջանակներում, դա գետրգան կանոնական համարարառությունը էր: Ինքնուրույն զարգացման այս սահմանափակությունը մեթոդական տվյալ եղանակի բնույթից էր, որը տեղ չէր թողնում ծավալվելու:

Համարարառային գրականության ինքնուրույն զարգացումը մեզանում հնարավոր է դարձել միայն այն շրջանում, երբ հետազոտության համարարառային մեթոդն արդեն անցել էր բառային-բառարանային եղանակի լայն կիրառմանը: Բառարանային ինքնուրույն համարարառ կազմելու առաջին փորձը, ինչպես տեսանք, ԺԷ դարում կատարեց Ղազար Բաբերդացին և այնուհետև ԺԸ, ԺԹ և Խ դարերում հրապարակ եկան հայկական մի շարք այդպիտի համարարաններ, որոնց վերաբերող փաստական տվյալներն ու մեր գնահատումներն արդեն ամփոփեցինք սուրբգրական և գիտական համարարառների բաժիններում լուրաքանչյուրի մեջ ժամանակագրական կարգով:

Սակայն այդ համարարառները կառուցվածային առումով կարող են բաժանվել այլ բնույթի խմբավորմների, որոնց ճշտումը ցուց կտա համարարառային բառարանագրության զարգացման աստիճանները մեզանում, ժամանակի ընթացքում նրա կրած կերպարանափակությունները: Խմբերի

Բիմնական տարրերությունները ցուց տալու համար պարմանականորեն օգտագործենք Ամձն և Առնում բառերը՝ հողովան և խոնարհման մի բանի պարզ ձևերով։

**Ա. Խ ո ւ մ բ—Այրքնական բառացանկ, առանց վկայությունների։**

**Ամձն** (այս միակ բառի դիմաց, փոխանակ վկայությունների, բավա-  
նշաններով հողովանը են տրվում դեպի բնագիրը)։

**Առնում** (նույնապես)

Այս կառուցվածքն ունեն Ղազար Բարերդացու «Ցանկ ի վերայ այրութեաց ... ըստ հայկական թուց»-ը, Հովհաննես Սատվածառյանի՝ «Նարեկ» գրքին Վերաբերող «Նշանակութիւնք խրթին բառից ինչ մատնենիս»-ը և Հ. Գ. Ավետիքյանի «Ցուցակ մեկնելի բառից ինչ Նարեկին»-ը։

**Բ. Խ ո ւ մ բ—Բնագրային համարարրատ, վկայություններով։ Բառերը  
բերվում են բնագրում ունեցած քերականական առկա ձևերով և հետադա  
կապակցություններով։ Դասավորումը բառաշարում կատարվում է ըստ բա-  
ռաձնի առաջին տառերի, ուստի և նոյն բառի տարրեր ձևերն ընկառում են  
տարրեր տեղեր։**

**Ա.Աճամբ անձին գօտի ածէիր (դասավորվում է Ա. տառի շարքում)։**

**Ա.Աճին իրում գանձեսց (նույնապես)։**

**Զանձինս առ արդարս ունել (դասավորվում է Զ. տառի շարքում)։**

**Զանձն իր կեցուցանել (նույնապես)։**

**Ցանձինս իրեւանց ընդունելին (դասավորվում է Ց տառի շարքում)։**

**Ցանձն իր զգօրութիւնն (նույնապես)։**

շարքում)։

**Առեալ զօրականս և հարիւրապես (դասավորվում է Ա. տառի**

**Առնուլ զիաց մանկանց (նույնապես)։**

**Առնումք զիացուածսն (նույնապես)։**

**Առնուցու և պատմեսց ձեզ (նույնապես)։**

Այսպիսի կառուցվածք ունեն Անամիա Ալլահվերդյանի «Ցանկ սրբոց  
չորից ավետարանչաց»-ը և Բաղդասար Կ. Պոլսեցու «Ցանկ գիրք Նոր Կոտա-  
կարանին»-ը։

**Գ. Խ ո ւ մ բ—Բնագրային համարարրատ, վկայություններով։ Բառերը  
բերվում են, ինչպես Բ. Խմբում, բնագրում ունեցած քերականական առկա  
ձևերով և հետադա կապակցություններով։ Բառերի դասավորումը նույնապես  
այրթնական է, որի համար, սակայն, հաշվի է առնվում միայն բառի հիմքը,  
իսկ նրա սկզբին գտնվող նախտիրները կամ մասնիկները թողնվում են ան-  
օլկատ։**

**Ա.Աճամբ անձին գօտի ածէիր.**

**Ա.Աճին իրում գանձեսց.**

**Ա-Ա.Աճինս առ արդարս ունել.**

**Լ-Ա.Աճինս իրեւանց ընդունելին.**

**Լ-Ա.Աճն իր զգօրութիւնն.**

**Գ-Ա.Աճն իր կեցուցանել.**

**Առեալ գօրականս և հարիւրապեսու.**  
**Առնով զիաց մանկանց.**  
**Առնումք զիայցուածն.**  
**Առնուցու և պատմեսցէ ձեզ.**

Այսպիսի կառուցվածք ունեն Կ. Պոլսի Ազգային Մատենադարանի «Նո 2 համարաբրառ»-ը և Հակոբ Նալյանին վերագրովող՝ Նարեկացու երկերի համարաբրառը:

**Դ խումբ—Քնագրային համարաբրառ, վերագրութեաներով:** Բառը բերվում է իր բերականական միմնական ձևով և այդ միակ բառի տակ տեղադրվում են նոյն բառը պարունակող ամբողջական վերագրութեաները:

### Առձն

—Որ կամիցի զԱնձն իր կեցուցանել՝ կորուսցէ զնա.  
 —Գիտաց Յիսուս յԱնձն իր զօքրութիւնն որ ել ի նմանէ.  
 —Սուաքեցին դատաճանս կեղծառորեապս՝ զԱնձինս առ արդարս ունել.  
 —Մինչ մանուկն էիր՝ Անձամբ անձին գօտի ածէիր.  
 —Իրաքանչիւր որ ի ձենչ Անձին իրում գանձեսցէ որ ինչ և յաջողեսցի.  
 —Զդարձ փոխարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յԱնձինս իրեամց ընդունէին.

### Առնով

—Ոչ է բարուր Առնով զիաց մանկանց և արկանել շանց.  
 —Յիմնէ անտի Առնուցու և պատմեսցէ ձեզ.  
 —Գիտեմք՝ եթէ Առնումք զիայցուածն՝ զոր հայցեամբ առ ի նմանէ.  
 —Որոյ անդէն Առեալ գօրականս և հարիւրապեսու՝ դիմեաց ի վերայ նոցա.

Այս կառուցվածքով են 1848 թվականին Զմունիսիապում հրատարակված նորկտակարանային անանուն համարաբրառը, 1895 թվականին Երուսաղեանում հրատարակված՝ Աստվածաշնչի համարաբրառը (Թագենս Վ. Աստվածատուրյանի), 1963 թվականին Բեյրութում հրատարակված աշխարհաբար համարաբրառը (Վ. Գ. Սահմականի) և Եղիշիկի անտիպ համարաբրառը:

**Ե խումբ—Քերականական համարաբրառ, առանց վերագրութեաների:** Բառերը բերվում են բնագրից կտրված և դասավորվում են ըստ բերականական ձևերի հաջորդականության:

### Անձամբ անձին

**Անձն—անձին**  
 —յանձն  
 —յանձինս  
 —զանձն  
 —զանձինս

### Առեալ

### Առնով

**Առնում—առնումք**  
 —առնուցու

Այսպիսի կառուցվածք ունի խորենացու քերականական համարարրատը, որ գլատիպով հրատարակել է Ակադեմիան:

Անհայտ է մնամ այն, թե ո՞ր խմբին էին պատկանում Հովհանի վ. Տեր- և վագայանի կազմած համարարրատը և «Բորբառան խնկոց»-ը: Վերջինս, սակայն, ինչպես ասվեց իր տեղում, հայանաբար նոյն էր «№ 2 համարար- րատ»-ի հետ:

Վերոհիշյալ խմբակորումները սահմանելու համար մենք հաշվի ենք առեղ գոյություն ունեցող հայերեն համարարրատների կառուցվածային ամե- ամիսնական՝ որոշից տարբերությունները միայն և այդ պատճառով քերել ենք միայն քերականական ամենապարզ ձևեր ունեցող օրինակներ, որպեսզի շմանանանք: Զմանքանալու մտահոգությունը գիշավորապես նրանից էր, որ Գ. խմբի համարարրատների կառուցվածքի մասին գրական աղբյուրները, ինչ- պես տեսանք արդեն, Աշում էին միայն մեր հիմնական համարած տվյալները և որից ոչինչ, ուստի և բացառված չէ, որ այդ համարարրատներն ունենան նաև տարբերակումներ: Կարելի է նոյնին ասել նաև բոլոր խմբերի վերաբեր- յալ, թե նոյն խմբին պատկանող համարարրատներից ամեն մենք կարող ենք լայացնել որոշ տարբերակումներ, որոնք չեն ազդի հիմնականի վրա այդպես են, օրինակ, Դ. խմբին պատկանող համարարրատները, որոնց նկա- րագրությունները տվել ենք համապատասխան տեղերում: Համեմայն դեպք՝ խմբավորումների վերոհիշյալ պատկերն իր ընդհանուր գծերի մեջ ներկա- յացնում է հայ համարարրատային բառարանագրության անցած ուղին և կրած կերպարանափոխությունները՝ սկսած ԺԷ/ԺԸ դարերից:

Համարարրատային գրականությունը թեև զարգացման երկար ժամանա- կաշրջան է ապրել մեզանուն, Ե դարից մինչև մեր օրերը, բայց դեռ համա- կողմանի ոստումնափոխության առարկա չի եղել հայագիտության մեջ: Անցյա- լում նրա ունեցած նշանակության և ապագայում նրան վերապահված դերի մասին գիտական լիարժեք գնահատում դեռ չի տրվել: Մինչեղու հայտնի է, որ սկզբում թարգմանական և հետո ինքնուրույն համարարրատները դարերի ընթացքում մեզ մոտ օգտագործվել են պատմական, գաղափարախոսական և գիտական հետազոտությունների համար որպես մեթոդական ուղեցույցներ, որոնք աղբյուրագիտական և փաստագիտական հյութի մատակարարման իրանել են հայ քննական-հետազոտական մտքի զարգացումը: Հատկապես վերջին դարերում՝ հայ համարարրատային գրականությունը զգալի զարգաց- ման է հասել համարարրատային բառարանագրության ուղիով և հայերեն լեզվի վրա հիմնված ինքնուրույն համարարրատներով ստացել է ազգային նկարագիր, որովհետև նրա զարգացման ընթացքը կապվել է, ինչպես տե- սանք վերևում, լեզվի քերականական երևույթների ընկալման հետ: Մեր օրե- րում՝ հայ համարարրատային գրականությունը շարունակում է զարգանալ, մշակման ավելի կատարելագործված եղանակներով, որպես գիտա-մեթոդա- կան գրականության մեռ:

Հայագիտության համար հետազոտության համարարրատային մեթոդի օգտագործումը լայն հետազոտման ունի բնագրաքննական, աղբյուրագիտա- կան և լեզվաբանական աշխատանքների բնագավառում: Հին բնագրերի՝ պատմական, գրական և գիտական երկերի համեմատական ուսումնափո- խյան, աղբյուրների բննության, ինչպես նաև նայերեն լեզվի օրինաչափու- թյունների հետազոտության համար նոր ուղիներ են բացում համարարրա- տները, և պատահական չեն, որ ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ցանցում ընդգրկված մասնագետների փոքրիկ խումբը պերկարում ավելիված է հայ

մատենագրության ընդհանուր համարարրար ստեղծելու կարևոր գործին:

Այս ուղղությամբ անցյալում հայ մշակույթի համեստ գործիշներն աշխատել են իրենց անհատական հայսաձեռնությամբ ու միջոցներով, և նրանցից ասեն մեկն իր մերդություն է կատարել գործի մեջ. իսկ այսօր հայագիտության մշակները,—ոչ անհատարար, այլ հավաքարար,—շարունակում են այդ աշխատանքները՝ պետական միջոցների օգնությամբ: Հայագիտական աշխատանքների համար տրամադրված պետական լայն միջոցների շնորհիվ կան նյութական ու բարոյական այն բոլոր պայմանները, որոնցով կարելի է ապահոված համարել սկզբան գործի շարունակումն ու ավարտումը: Նաև այն այդ հոկա ծրագրի իրականացման համար, ըստ երևույթին, բավական չեն լինի գոյություն ունեցող այդ փոքրիկ խմբի՝ Կենտրոնական գրադարանին կից գործող քարտարանային բաժնի ուժերը և գուցե անհրաժեշտ համարվի այն վերածել ինքնուրույն հաստատության, որպեսզի հնարավոր լինի, ավելի մեծ ուժերով, աշխատանքները ծավալել այնպիսի չափերով, որոնք համարստափառնեն այդ օգտավետ գործի տարողությանը: Դա կիհներ ոչ միայն հայագիտության շահերի պահանջը, որովհետև հայագիտությունն ինքը համաշխարհային պատմության և մշակույթի ուսումնակիրությունների շարքին պառկանող բնագավառ է, նեռևերար և հայ մատենագրության համարարրառը տեղեկատվության անգերազանցելի աղբյուր կիհնեն նաև համաշխարհային առումով բոլոր տեսակի ու տիպի ներազուտությունների համար:

Հայտնի է, որ Մերձավոր և Միջին Արևելքի, Հրուսային Աֆրիկայի, Եվրոպայի միջին-արևելյան մասի, Հարավային Ռուսաստանի և Կովկասի պատմական, առևտրական ու տնտեսական լյանքի բազմաթիվ փաստեր իրենց արտացղումն են գտնել հայ հին գրականության մեջ: Այնուեղ ամփոփված են նյութեր, որոնց վերաբերյալ գրավոր այլ աղբյուրներ գուցե առնաւարակ գոյություն չունեն: Ծառ ժողովորդների համար, որոնք ամելի ոչ ժամանակներում են անցել գրի ու գրականության, և կամ նովնիսկ չեն անցել մինչև մեր օրերը, հայ մատենագրությունը կարող է դիտվել իրեն իրենց հնագույն պատմության սկզբնաղբյուր: Հայ մատենագրության համարարրառները կարող են մեծ նյութ մատակարարել բյուզանդագիտության, արարագիտության, իրանագիտության և կովկասագիտության համար, ինչպես և գիտությունների պատմության համար:

Այս բոլոր տեսակներով՝ հայ գրարար մատենագրության ընդհանուր համարրառը համաշխարհային գիտության համար կհանդիսանա հավայական արդյունքներ խոստացող հարուստ աղբյուր, որի շնորհիվ ավելի ևս կրարձրանա հայագիտության հարգն ու վարելը գիտական աշխարհում:

Հայ մատենագրության ընդհանուր համարրար ստեղծելու ծրագրի իրագործումը կիհնի հայ համարրառային դարավոր գրականության թագն ու պատկը: